ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2023-2028ԹԹ.

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ……..3

1) ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ…….....7

2) ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ……10

2.1 ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

2.2 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.3 ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

2.4 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

2.5 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

2.6 ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԸ

2.7 ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

3) ՆՊԱՏԱԿՆԵՐԻ և ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ ……19

3.1ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ,ԽՆԴԻՐՆԵՐԸ

3.2 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

3.3 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

4) ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ……24

5) ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ (ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԱՐԴԿԱՅԻՆ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ) ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ……24

6) ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԵՆՔԱՅԻՆ ՔԱՅԼԵՐԸ……30

6.1 ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

6.2 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

6.3 ԿՐԹՕՋԱԽԻ ՍՈՎՈՐՈՂԸ

6.4ԴՊՐՈՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

6.5 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

6.6 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

6.7 ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

6.8 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ, ԴՊՐՈՑԻ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ

7) ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ……39

ՆԱԽԱԲԱՆ

Սովորական ուսուցիչը պատմում է: Լավ ուսուցիչը բացատրում է: Բարձրակարգ ուսուցիչը ցույց է տալիս: Հանճարեղ ուսուցիչը ոգեշնչում է:

Ուիլյամ Ուորդ

Դպրոցի զարգացման սույն ծրագիրը ներառում է ՀՀ Վայոց ձորի մարզի «Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի 2023-2028թթ կրթական գործ-ընթացի ժամանակակից պահանջներին համապատասխան դպրոցի զարգաց-ման տեսլականը: Զարգացման ծրագիրը դպրոցի ռազմավարական ուղենիշ-ներն են՝ նախատեսված առաջիկա հինգ տարիների առաջընթացի համար:

Հաշվի առնելով հանրակրթական ոլորտի բարեփոխումների ներկա փուլի հիմնական խնդիրները և մարտահրավերները՝ ծրագիրն իր մեջ ներառում է մի շարք բարեփոխումներ, որոնք իրենց մեջ պարունակում են կրթության որակը պայմանավորող գրեթե բոլոր գործոնները՝ մարդկային ռեսուրսներ, ծրագրային մեթոդաբանության ապահովում, նորմատիվ իրավական դաշտի առկայություն, չափորոշչային նոր պահանջներ:

Մեր երկրում օրենքով է ամրագրված, որ կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը ազգային դպրոցն է, նպատակը՝ հայրենասեր, բազմակողմանի զարգացած, դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է: Կրթություն ստանալու մարդու իրավունքն ամրագրված է 1948 թվականին ընդունված ՄԱԿ-ի 26-րդ հոդվածի «Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում», համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք կրթության իրավունք ունի: Կրթությունը, առնվազն տարրական և հանրակրթական փուլերում, պետք է լինի անվճար: Տարրական կրթությունը պետք է լինի պարտադիր: Տեխնիկական և մասնագիտական կրթությունը պետք է հանրամատչելի լինի, իսկ բարձրագույն կրթությունը, ընդունակություններին համապատասխան,

հավասարապես մատչելի բոլորի համար: Կրթությունը պետք է նպատակաուղղված լինի անձի լիարժեք զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի ամրապնդմանը: Այն պետք է նպաստի բոլոր ազգերի, ռասայական և կրոնական խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուրժողականությանն ու բարեկամությանը, է՛լ ավելի նպաստի ՄԱԿ-ի խաղաղապահպան գործունեությանը: Ծնողներն իրենց երեխաների համար կրթության տեսակն ընտրելու առաջնային իրավունք ունեն»:

Կրթությունը նպատակաուղղված է մարդկության առաջավոր փորձի փոխանցմանը սերունդներին, իսկ այդ փորձի կուտակման գործընթացում մեր ժողովուրդը միշտ նշանակալի դեր է ունեցել, որը հարկավոր է պահպանել ու հնարավորինս արժեվորել: Կրթությունն ընդլայնում է մարդու հնարավորությունները գիտելիքների և մասնագիտական կարողությունների ձեռքբերման ոլորտում, ձևավորում է մարդկային զարգացման կարևոր բաղկացուցիչներից մեկը՝ մարդկային կապիտալը, ստեղծում է կյանքի որակ և ծառայում որպես տնտեսական աճի աղբյուր: Եվ պատահական չէ, որ զարգացած կամ զարգացող երկրները առավել մեծ ուշադրություն և միջոցներ են հատկացնում կրթության կարգավորման խնդրին: Կրթությունը մարդու անձի ձևավորման ու զարգացման, իմացական գործունեության եղանակների տիրապետման, գիտելիքների հաղորդման, կարողությունների ու հմտությունների մշակման, անցյալի փորձի յուրացման գործընթաց է: Ինչպես Վիկտոր Հյուգոն է ասել. **«Ժողովրդի մեծությունը չի չափվում նրա թվաքանակով, ինչպես որ մարդու մեծությունը չի չափվում նրա հասակով, միակ չափանիշ է ծառայում նրա մտավոր զարգացումը և նրա բարոյական մակարդակը»:** Որպես կրթության բնագավառի գերխնդիր կարևորվում եմ կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին ու ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար հնարավորությունը: Հետևաբար այն խիստ արդիական է, քանզի իր վրա է վերցնում հարափոփոխ և սրընթաց զարգացող աշխարհի պահանջներին համապատասխան մարդու և քաղաքացու ձևավորման ողջ պատասխանատվությունը:

Ուստի անհրաժեշտություն է առաջանում պլանավորել դպրոցի զարգացման ծրագիրը առաջիկա հինգ տարիների կտրվածքով՝ հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ դպրոցի հիմնական առաքելությունը ոչ միայն շրջանավարտներին որակյալ կրթություն և մասնագիտական կողմնորոշում ապահովելն է, այլ քաղաքացիական հասարակությանը պիտանի, դաստիարակված անձնավորություն տալը:

Միաժամանակ կրթությունը վերաճում է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համա-
կեցության և այլ արժեքային որակները:

Հանրակրթության համակարգում տեղի են ունենում համակարգային փոփոխություններ, որոնք պայմանավորված են ոչ միայն ազգային առանձնահատկություններով, այլև համաշխարհային զարգացումներին բնորոշ աշխարհաքաղաքական, ժողովրդագրական, մշակութային, սոցիալական և տեխնոլոգիական գործոններով:

Ծրագրի իրավական հիմքերն են կազմում Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը, «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին», «Լիցենզավորման մասին», «Կրթության պետական տեսչության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին», «Վարչարարության հիմունքները և վարչական վարույթի մասին», «Գնումների մասին», «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքները, ՀՀ աշխատանքային օրենսգիրքը, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը, կրթության բնագավառը կարգավորող հարկային օրենսդրությունը, ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության

պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը, հանրակրթության պետական չափորոշիչը, ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշները և իրականացման կարգը, հանրակրթական ուսումնական հաստատության կառավարմանը վերաբերող կրթության կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝նախարարություն) համապատասխան նորմատիվ ակտերը և այլ փաստաթղթեր:

1. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Առաքելությունը կազմակերպության ցանկալի ապագայի մտապատկերն է:

Հանրակրթությունը ժամանակակից քաղաքակրթության նվաճումներից է: Իսկ կրթության ոլորտը շարունակում է մնալ որպես երկրի կայուն զարգացման, մարդկային կապիտալի պահպանման ու վերարտադրության նախապայմաններից մեկը: Հրամայական է կրթական նոր տեխնոլոգիաների ներդրումը, անհատականացված որակյալ ուսուցումը, բարենպաստ կրթական միջավայր ապահովելուն զուգընթաց դաստիարակել ազգային ինքնության, նույնականացման խորը զգացումով օժտված անհատ:

Ժամանակակից աշխարհում արագ զարգացող տեղեկատվական տեխնոլոգիաների և գիտատեխնիկական նոր նվաճումների կիրառությունը իրենց անմիջական ազդեցությունն են թողնում կրթության ոլորտի վրա՝ պայմանավորվելով կրթության վերանայման անհրաժեշտությունը:

Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը: Կրթության բնագավառում պետական քաղաքականության կազմակերպական հիմքը կրթության զարգացման պետական ծրագիրն է, որը ՀՀ կառավարության ներկայացմամբ հաստատում է ՀՀ Ազգային ժողովը: ՀՀ անկախության հռչակումից հետո սկսվել են իրականացվել կրթության ոլորտի բարեփոխումներ, որոնք հնարավորություն են տվել լուծելու համակարգում առկա շատ խնդիրներ, կայունացնելու իրավիճակը և նախադրյալներ ստեղծելու զարգացման համար:

Հայաստանում իրականացված հետազոտությունները և ԿԶՆԱԿ-ի մշտադիտարկման արդյունքները բացահայտում են կրթական գործընթացում առկա և նոր հասունացող հիմնախնդիրները, որոնց հաղթահարման համար պահանջվում են համակարգված, առաջանցիկ գործողություններ:

Կրթական քաղաքականության ճշգրտման համար կարևոր է ընդունել, որ փոխվել է մարդկանց, այդ թվում կրթական գործընթացի մասնակիցների աշխարհընկալումը, վերաիմաստավորվում են «գիտելիք», «տեղեկույթ», «ուսուցում» և այլ առանցքային հասկացություններ, բազմազան են դարձել ուսումնական գործունեության տեսակները: Այս և առկա այլ իրողություններին արագ արձագանքելու անկարողությունը, ինչը նաև պայմանավորված է կրթական համակարգի պահպանողական բնույթով և մանկավարժական աշխատողների նախաձեռնողականության պակասով, իրենց ազդեցությունն են թողնում մանկավարժական գործընթացի վրա՝ առաջացնելով լարվածություն և ճգնաժամային երևույթներ: Կրթության ոլորտի այս և այլ փոփոխությունները հանգեցրել են կրթության հարացույցի վերաիմաստավորմանը: Այսպիսով, կրթության ժամանակակից հարացույցը պետք է հիմնվի վերջնարդյունքի ապահովման, կոմպետենտության ընդգրկուն հասկացության վրա և նպատակաուղղվի նոր սերնդի համակողմանի կայուն զարգացմանը: Կայուն զարգացում ասելով, պետք է հասկանալ շրջանավարտի մոտ այնպիսի որակների ձևավորմանը, որն ապահովում է նոր գիտելիքներ յուրացնելու պատրաստակամություն և ինքնակրթության ցանկություն և կարողություն:

<u>ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ</u>՝ *«Եղեգնաձորի թիվ 1 հիմնական»-ի առաքելությունը սովորողներին ազգային հենքի վրա որակյալ կրթություն տալն է՝ ապահովելով հայրենասիրության և մարդասիրության ոգով դաստիարակված քաղաքացիների ձևավորումը՝ հետագա շարունակական ուսումնառությամբ և կյանքի համար նախապատրաստվածությամբ:*

<u>ԴՊՐՈՑԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ</u>՝ *մինչև 2028 թվականը դառնալ հասարակության, տնտեսության, պետության զարգացման պահանջներին համապատասխան, տեսական ու կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով ու ժամանակակից նորա-բարական կարողություններով օժտված առաջատար հանրակրթական դպրոցներից մեկը Հայաստանի Հանրապետությունում:*

Տեսլականը կդառնա իրականություն հետևյալ քայլերն իրականացնելու պարագայում՝

- Բարենպաստ կրթական միջավայրի ապահովում յուրաքանչյուր սովորողի համար.
- հոգևոր-մշակութային բարձր արժեքների ուսուցանում.
- ռազմահայրենասիրական դաստիարակության պատշաճ կազմակերպում.
- ուսման բարձր որակի ապահովում, արդյունավետ և արդիական կրթության իրականացում:

Այս ամենի իրականացման գլխավոր երաշխիքը դպրոցի ճիշտ, արհեստավարժ կառավարումն է, որի արդյունավետությունը կախված է դպրոցի տնօրենի անհատական առանձնահատկություններից և պատասխանատվությունից: Ուստի կարևորում եմ նաև անդրադառնալ իմ պատկերացմամբ նրա՝ որպես առաջնորդի կերպարին, ով պիտի դառնա լավագույն օրինակ դպրոցի ողջ անձնակազմի և աշակերտության համար:

Կարողություններ, որոնք անհրաժեշտ են 21-րդ դարի դպրոցի տնօրենին՝

• Վերլուծելու կարողություն

•Մանկավարժին և սովորողին արժևորելու կարողություն

•Աշխատակիցներին ճիշտ գնահատելու և հոգեբանությունը հասկանալու կարողություն

• Տեղեկատվության հետ աշխատելու կարողություն

• Հետազոտելու կարողություն

• Ձեռնարկատիրական կարողություններ

• Խնդիրները լուծելու կարողություն

•Արդարացի և թափանցիկ խրախուսման կարողություն

• Անընդհատ սովորելու և կատարալագործվելու կարողություն

• ՏՀՏ կիրառելու կարողություն

• Ծրագրային առաջնորդական թիմ ստեղծելու կարողություն

• Հաղորդակցման կարողություն

• Ուսումնական միջոցները խնայելու ի նպաստ ծառայեցնելու կարողություն

2. ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

2.1 ՈՒԺԵՂ և ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ

Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար նախ անհրաժեշտ է վերլուծել առկա իրավիճակը, բացահայտել ուժեղ և թույլ կողմերը, վերհանել առկա հիմ-նախնդիրները:

Վերլուծությունը համակարգված իրականացնելու համար նպատա-կահարմար է այն կատարել ըստ որոշակի ոլորտների՝ առավելագույնս ընդ-գծելով դպրոցի ուժեղ և թույլ կողմերը:

ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐ	ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ
• Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը (դպրոցի կանոնա-դրություն, տեղայնացված օրինակելի իրավական ակ-տեր, ներքին իրավական ակտեր), դրանց վարումը. • Նորակառույց դպրոցի ժամանակակից շենքային պայմանները և նյութատեխ-նիկական բազան, • Կառավարման և խորհրդակ-ցական մարմինները, • Աշակերտական համակազմը, • Մանկավարժական համա-կազմը, • Համագործակցությունը կրթության կառավարման	• Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը, • Ձեռնարկատիրական շարունակական գործունեության բացակայություն, • Մանկավարժական համակազմում որակավորման տարակարգ և կամավոր ատեստացիայի ցանկություն ունեցողների պակաս, • Նորամուծությունների նկատմամբ մանկավարժների հետաքրքրության պակասը, • ՏՀՏ-ների ներդրման և օգտագործման ցածր

մարմինների և շահառու կազմակերպությունների հետ, • Ուսումնական միջավայրը, • Կրթության որակը՝ ըստ սովորողների ուսումնառության արդյունքների: • Շենքային պայմանների համապատասխանություն ԿԱՊԿՈՒ սովորողների կարիքներին, վերելակներ և թեքահարթակներ; Համագործակցությունը համայնքի հետ՝ մարզպետարանի կրթության վարչության, ՏԻՄ-ի կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի համակարգողի, մարզային գրադարանի, երկրագիտական թանգարանի, պատկերասրահի, քաղաքային մարզադպրոցի, մարզադաշտի, Մանկական երաժշտական դպրոցի, Գեղարվեստի դպրոցի, ՄՍԿ-ի, քաղաքային մանկապարտեզների: • Թիմային հաջողված և արհեստավարժ աշխատանք:	մակարդակը: • Չափորոշչահեն կրթության իրականացման ցածր մակարդակը: • Մասնագիտական կողմնորոշման ուղղության տարվող աշխատանքների ոչ հստակություն • Աշակերտների կարգապահական կանոնների պահպանման ոչ բավարար մակարդակ: • Դպրոցի սրահներում և միջանցքներում հերթապահության ցածր արդյունավետություն: • Մասնակցային արժեքային միջավայր՝ սովորողներ,ուսուցիչներ,ծնողներ • Համագործակցային հարաբերություններ ուսուցիչ-ծնող-աշակերտ:

2.2 ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դպրոցը հիմնադրվել է 1971թ.-ին: Այն գտնվում է Եղեգնաձոր քաղաքի կենտրոնում: Դպրոցը բոլոր բնագավառներում դրսևորվել է իր թվին համապատասխան՝ միշտ և ամենուր՝ 1-ինը: Դպրոցն իր գոյության տարիներից ի վեր փայլել է ոչ միայն առաջադիմությամբ և կրթության պատշաճ որակով, այլև նորարարությամբ և արհեստավարժ, գիտակ կադրերով: Մարզպետարանի և քաղաքային իշխանությունների կողմից վայելում է պատշաճ վստահություն և հարգանք:

2007թ-ից դպրոցը դարձել է Դպրոց –կենտրոն, իրականացրել է բազմաթիվ ծրագրեր և արժանացել Դպրոց-կենտրոն ԻԱՄ-ի կողմից գովասագրերի և խրախուսական նվերների: Դպրոցը միշտ աջակցել և ողջունել է նորարարական փոփոխությունները:

Ներկայումս, դպրոցում ուսումնական գործընթացի ընդհանուր կազմակերպումը հանդիսանում է կրթական կարիքների լիարժեք բավարարումը, ԿԱՊԿՈՒ երեխաների ինտեգրումը կրթական գործընթացին, աշակերտների և նրանց ծնողների միջոցով լիարժեք ու բարձրակարգ կրթության ապահովումը: Դպրոցում գործում է «Կայուն դպրոցական սնունդ» ծրագիրը 1-4-րդ դասարաններում՝ ամենօրյա տաք սնունդ ապահովելով տարրական դպրոցի աշակերտներին: 2023 թ. հունվարի 9-ից ՄԱԿ-ի կողմից իրականացվում է «Երեմյան Փրոջեքթս»-ի «Դպրոցական կաթ» ծրագիրը սկզբից 5-8-րդ դասարանների աշակերտների համար, հիմա արդեն նաև 9-րդ դասարանցիների համար:

Դպրոցում գործում են 4 մեթոդական միավորումներ: Նախատեսվում է 2023-2024թթ. կազմավորել 5-րդ մեթոդական միավորումը՝ թեթևացնելով ԲՏՃՄ առարկայական մեթոդական միավորման անդամների թվը:

2.3 ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲԱԶԱՆ

❖ *Եղեգնաձորի թիվ 1 հ/դ շենքային պայմանները*

Դպրոցը նորակառույց է, ուսուցումը այնտեղ կիրականացվի նոր ուսումնական տարվանից: Ունի տարրական և հիմնական մասնաշենքեր:

E-mail: yeghegnadzor1@schools.am

Դպրոցի կայք: yeghegnadzor1.schools.am

- ✓ Դպրոցի տիպը ըստ իրականացվող կրթական ծրագրերի աստիճանի՝ Հիմնական (1-9 դասարաններ)
- ✓ Աշխատանքային շաբաթ՝ 5-օրյա
- ✓ Դպրոցի շենքի տիպը- նորակառույց, գերժամանակակից
- ✓ Աշխատանքային ռեժիմ- միահերթ
- ✓ Պետական ռեգիստրում գրանցման համարը՝ 65.210.00411
- ✓ Ուսումնական սենյակների քանակը՝ 24
- ✓ Հանդիսությունների դահլիճ
- ✓ Մարզադահլիճ
- ✓ Ուսուցչանոց
- ✓ Բուժկետ
- ✓ Գրադարան
- ✓ Սպորտային և խաղահրապարակներ
- ✓ Դպրոցական նոր շենքը կջեռուցվի լոկալ ջեռուցմամբ:

❖ *Նյութատեխնիկական բազա.*

- ➢ Դպրոցն ունի հեռախոսային ներքին ցանց
- ➢ Ինտերնետային որակյալ ցանց և Wi-Fi առկայություն:
- ➢ Դպրոցական նոր գույքի ամբողջական ապահովում:

- ԲՏՀՄ առարկաների կաբինետների արդիական կահավորում և նյութատեխնիկական նյութերի նորացում, տեխնոլոգիական առկայություն և հարստացում:
- Գրադարանի ընդլայնում՝ կից ընթերցասրահով հանդերձ:
- SMART 1 գրատախտակ, 2-րդի ձեռքբերման գործընթաց:
- 2 պրոյեկտոր
- 10 համակարգիչ, 3 տպիչ սարք
- 8 գրասալիկ
- 2 փափուկ կահույք, հանդիսությունների սրահի համար 258 աթոռ
- Գրասենյակային 40 աթոռ

2.4 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԱԿՑԱԿԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Դպրոցի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Կառավարման խորհուրդ – 9 անդամ

Նախագահ՝ Գնել Դովլաթյան

Ծնողական խորհուրդ- 24 անդամ

Նախագահ՝ Հայկուհի Վարդանյան

Աշակերտական խորհրդի կազմը՝

Անդամներ՝ 31, նախագահ՝ Արամ Կարապետյան, փոխնախագահ՝ Մերի Աղաջանյան

Մանկավարժական համակազմը՝

- Տնօրեն
- Փոխտնօրեն-2
- Դաստիարակչական աշխատանքների կազմակերպիչ-1
- Ուսուցիչ-45
- Ուսուցչի օգնական-3
- Հոգեբան-1

- Սոցմանկավարժ-1
- Ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմ-15 (գլխավոր հաշվապահ, հաշվապահ, գնումների համակարգող, 3 հավաքարար, գրադարանավար, 2 լաբորանտ, տնտեսվար, 2 օպերատոր, դռնապան, գործավար:

ԴՊՐՈՑԻ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ԲԱՇԽՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

	Ընդամենը
Ուսուցիչներ ընդամենը	**32**
Հայոց լեզու և գրականություն	4
Մաթեմատիկա	3
Ֆիզիկա	1
Քիմիա	2
Կենսաբանություն	1
Պատմություն ***Հայ. եկեղ. պատմ.*** ***Հասարակագիտություն***	2
Աշխարհագրություն ***Բնագիտություն***	1
Ֆիզկուլտուրա	2
ՆԶՊ	1
Ռուսերեն	4
Անգլերեն	5
Դասղեկ	15
Ինֆորմատիկա	2
Երգ.պար	1
Կերպարվեստ	1

Աշակերտական համակազմը՝

Դպրոցում սովորում են 576 աշակերտներ, որոնցից՝

260-ը ՝տարրական դպրոցում

316-ը՝ միջին դպրոցում

ԿԱՊԿՈՒ-6 աշակերտ

2.5 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Համագործակցություն արդյունավետ աշխատանք ՏՄԱԿ-ի, ԿԶՆԱԿ-ի հետ, տարբեր ՀԿ-ների, միջազգային կազմակերպությունների, կառույցների և այլ դպրոցների հետ:

«Քույր դպրոց» կարգավիճակի առկայություն սահմանամերձ Բարձրունի բնակավայրի դպրոցի հետ:

Համագործակցությունը համայնքի հետ՝ մարզպետարանի կրթության վարչության, ՏԻՄ-ի կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի համակարգողի, մարզային գրադարանի, երկրագիտական թանգարանի, պատկերասրահի, քաղաքային մարզադպրոցի, մարզադաշտի, Մանկական երաժշտական դպրոցի, Գեղարվեստի դպրոցի, ՄՄԿ-ի, քաղաքային մանկապարտեզների:

Համագործակցությունը կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ:

2.6 ԿՐԹԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Կրթական բարենպաստ միջավայրի անհրաժեշտությունը ենթադրում է ուսուցման ավանդական մոտեցումների վերանայում և հանրակրթական ուսումնական հաստատությունների նկատմամբ վերաբերմունքի ճշգրտում:

Ուսումնական գործընթացում ուսուցիչն ու դպրոցը կարող են ընտրել ***առարկայական չափորոշիչներով սահմանված կրթական մակարդակ ապահովող***

ցանկացած մանկավարժական տեխնոլոգիա և մեթոդ: Սույն կրթակարգի պահանջների կատարման համար յուրաքանչյուր դպրոց և ուսուցիչ պետք է ձգտի ապահովել.

1. *ուսուցման արդյունավետությանը նպաստող մթնոլորտ և ֆիզիկական միջավայր.*
2. *գիտելիքների յուրացմանը, կարողությունների, հմտությունների և արժեքային համակարգի ձևավորմանն ուղղված ուսուցման և դաստիարակության միասնականացում.*
3. *սովորողի կարողություններին համապատասխան առավելագույն կրթական մակարդակ ապահովող անհատական մոտեցում.*
4. *ուսումնական գործընթացում յուրաքանչյուր սովորողի հարաճուն մասնակցություն.*
5. *սովորողների կարողություններին աճին համապատասխան կրթական նոր պահանջների առաջադրում, զարգացնող ուսուցման կազմակերպում.*
6. *ուսուցման և դաստիարակության գործընթացում սովորողի անձնական կենսափորձը հաշվի առնելը.*
7. *միջառարկայական կապերի ստեղծմանն ուղղված տարբեր հնարների ու միջոցների կիրառում.*
8. *սովորողների և ուսումնական գործընթացի շարունակական ու տարաբնույթ գնահատում:*

Ուսուցումը և դաստիարակությունը կազմակերպելիս անհրաժեշտ է նկատի ունենալ հետևյալ ելակետային ***չափորոշչային հիմնադրույթները՝***

ա) յուրաքանչյուր սովորող ի վիճակի է յուրացնելու մանկավարժորեն և հոգեբանորեն ճիշտ ընտրված և ներկայացված ցանկացած ուսումնական նյութ.

բ) երեխաները միմյանցից զանազանվում են ոչ թե ուսումնական ծրագրերի յուրացման կարողությունների սկզբունքային տարբերություններով, այլ իրենց մտածելակերպով, հոգեբանական առանձնահատկություններով, լեզվամտածողության և ընկալման յուրահատկություններով.

գ) ուսուցման նկատմամբ սովորողի դրական վերաբերմունքը պայմանավորված է ինչպես ուսումնական նյութի բովանդակությամբ, այնպես էլ այդ նյութի յուրացման հաջող ընթացքով:

2.7 ՀԱՄԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Ներառական կրթությունը յուրաքանչյուր երեխայի համար, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, զարգացման առանձնահատկություններին համապատասխան, անհրաժեշտ պայմանների և հարմարեցված միջավայրի ապահովման միջոցով, կրթական գործընթացի առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշիչով սահմանված արդյունքի ապահովումն է:

«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի 2.1-ին մասի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետությունը» համընդհանուր ներառական կրթությունը հռչակում է որպես յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի ապահովման երաշխիք:

ՀՀ-ում հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի ճանաչումն ամրագրված է ՀՀ սահմանադրության 38-րդ հոդվածով, համաձայն որի՝ «Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք»:

Յուրաքանչյուր, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթության իրավունքի իրացման գործընթացն այժմ խարսխվում է կրթության մատչելիության, հավասար մասնակցության հնարավորության և որակի ապահովման սկզբունքների վրա: Ներառական կրթության ձևավորված ընկալումը, իբրև միայն հաշմանդամություն ունեցող անձանց կրթության իրավունքի իրացման գործընթացների ամբողջություն, այժմ համապատասխանեցվել է ՀՀ կողմից 2010թ. վավերացված ՄԱԿ-ի 2006թ. «Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» կոնվեցիայի պահանջներին:

Կրթության առանձնահատուկ պայմանների կարք ունեցող յուրաքանչյուր սովորողի ուսուցման կազմակերպման ռազմավարության կազմակերպման ելակետային դրույթերից մեկն այն է, որ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներն իրավունք ունեն օգտվելու հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայություններից՝ անկախ նրանց ընտրած ուսումնական հաստատության տիպից:

3. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄԸ

Զարգացման ծրագիրը կազմելիս առաջնորդվել եմ [Սխեմա1] բերված մեթոդաբանական մոտեցումներով, որի արդյունքում սահմանել եմ ծրագրի նպատակը՝ հաշվի առնելով դրա իրագործման համար նպաստավոր և խանգարող հանգամանքները, ինչպես նաև արտաքին պահանջներն ու ներքին ցանկությունները: Վերջիններիս մանրամասն ներկայացրել եմ հաջորդ ենթավերնագրերում:

Կրթօջախի գործունեության պլանավորման գործընթացը սովորաբար ունենում է հետևյալ բաղադրիչները.

ա/ կրթօջախի զարգացման հիմնական ուղղությունների, դրանց համապատասխան ծրագրերի, նպատակների և խնդիրների սահմանում:

բ/ ծրագրի իրականացման համար առկա հնարավորությունների, կադրային, ֆինանսական և այլ անհրաժեշտ ռեսուրսների հաշվառում-գնահատում

գ/ ծրագրի իրականացումն ապահովող գործողությունների նախատեսում

Վայոց Ձորի մարզի Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոցի զարգացման սույն ծրագրի մշակման համար կատարել եմ հետևյալ հաջորդական քայլերը՝

1. սահմանել եմ կրթօջախի առաքելությունը

2. վերլուծել եմ առկա իրավիճակը, բացահայտել առկա հիմնախնդիրները

3. սահմանել եմ հիմնական նպատակները և դրանցից բխող խնդիրները

4. սահմանել եմ հիմնական գերակայությունները, մշակել կատարման համար անհրաժեշտ գործողությունները և միջոցառումները:

5. սահմանել եմ հիմնական ռազմավարությունը, գնահատել առկա և անհրաժեշտ մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսները

6. անդրադարձել եմ ֆինանսական գործունեությանը

7. կանխատեսել եմ ծրագրի ակնկալվող արդյունքները:


Երկարաժամկետ ռազմավարական ծրագիր
Կարճաժամկետ ռազմավարական ծրագրեր
Ռազմավարական առաջնայնություն
Արժեքներ/վարքագծի կոդեքս/
Տեսլական

[Սխեմա 1]

3.1 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ , ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագիրը պետք է արտացոլի դպրոցի ռազմավարության պլանավորումը, որն ավելի շատ պետք է նպատակաուղղված լինի ապագային՝ իր հետ բերելով նորարարություն: Կարծում եմ՝ չի կարող լինել որևէ դպրոցի ստույգ զարգացման ծրագիր, եթե այն կազմելիս հաշվի չեն առնվել դպրոցի մանկավարժների, աշակերտների և ծնողների կարծիքները: Շահագրգիռների այս երեք խումբն է հատկապես հստակ պատկերացնում, թե որոնք են իրենց դպրոցի թերությունները և ինչ քայլեր է անհրաժեշտ ձեռնարկել դպրոցն է՛լ ավելի զարգացնելու համար:

Դպրոցի զարգացման ծրագիրն ուղղված է առաջիկա հինգ տարում դպրոցի բնականոն և արդյունավետ գործունեության ապահովմանը, դպրոցում կրթության որակի, գիտելիքի վարկանիշի բարձրացմանը, կրթական ծրագրերի իրականացմանը, դպրոցի առջև ծառացած հիմնախնդիրների աստիճանական լուծմանը, ժամանակակից մարտահրավերներին արձագանքելուն, կրթօջախի առաջընթացին՝ առաջնորդվելով հանրակրթության վերաբերյալ ՀՀ օրենսդրության, ենթաօրենսդրական ակտերի, ՀՀ կառավարության որոշումների պահանջներով:

Ելնելով նշված նպատակներից, ինչպես նաև սովորողներին արդյունավետ ու արդիական կրթություն տալու նպատակով ահրաժեշտ է՝

- *դպրոցն ապահովել որակական բարձր հատկանիշներով օժտված կադրերով,*
- *մանկավարժների արդյունավետ գործունեության համար ստեղծել բարենպաստ պայմաններ,*
- *կրթական գործընթացում մշտապես կիրառել ժամանակակից մեթոդներ,*
- *ամրապնդել դպրոցի նյութատեխնիկական բազան,*
- *ստեղծել նպաստավոր պայմաններ սովորողների առողջության պահպանման համար,*
- *աջակցել ուսուցիչների որակավորման տարակարգերի շնորհման գործընթացին համատեղ աշխատանքով,*

- *ձեռնարկել միջոցառումներ համագործակցելու տեղական և միջազգային կազմակերպությունների հետ կրթական գործընթացում նոր հաջողություններ արձանագրելու ուղղությամբ,*
- *դպրոցի կառավարման գործում ակտիվորեն ներգրավել դպրոցի խորհրդակցական մարմիններին, հատկապես ծնողական և աշակերտական խորհուրդներին,*
- *արդյունավետ օգտագործել ֆինանսները,*
- *ձևավորել դպրոցի առանձին կաբինետները*
- *արդիականացնել դպրոցում կիրառվող տեղեկատվական համակարգերն ու ծրագրերը,*
- *դպրոցի կառավարման համակարգը և ծնողների, ուսուցչական անձնակազմի ու սովորողների միջև հարաբերությունները հանրության համար դարձնել առավել թափանցիկ,*
- *իրականացնել աշխատանքներ՝ դպրոց-ընտանիք-համայնք կապն ամրապնդելու համար, դպրոցում ստեղծել այնպիսի միջավայր, որը կնպաստի դպրոցի, համայնքի, մանկավարժական կոլեկտիվի և կրթության նկատմամբ յուրաքանչյուր սովորողի և նրա ընտանիքի անդամների վստահության բարձրացմանը:*

3.2 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

● ՀՀ օրենսդրությամբ սահմանված երեխայի՝ սահմանադրությամբ ամրագրված կրթության իրավունքի իրացում:

● Կրթության գաղափարախոսական հենքի ապահովում՝ հենվելով պետության և համամարդկային արժեքների ներդաշնակեցման սկզբունքների վրա:

● Բոլոր սովորողների համար որակյալ կրթության մատչելիության ապահովում

●Սովորողների ստեղծագործական և ստեղծարար մտքի զարգացում՝ կրթության մեթոդների անհատականացման և արդիականացման միջոցով:

- *Սովորողների մասնագիտական ճիշտ կողմնորոշում,*
- *Կրթության բովանդակության բարեփոխում,*
- *Մշակույթը որպես հոգևոր սնունդ ընկալելու ունակություն,*
- *Քաղաքացիական գիտակցության իրավունքի ըմբռնում,*
- *Հանրակրթությունը՝ որպես մարդու և քաղաքացու շահերին նպաստող, անհատին ու ժողովրդին ծառայող համակարգի ընկալում:*

3.3 ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

- Պետական բյուջե
- Արտաբյուջետային միջոցներ
- Բարերարներ և նվիրատուներ
- Շրջանավարտներ
- Ծնողներ

Ֆինանսատնտեսական գործունեություն

ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ	ՍՏՈՒԳՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՄԱՆ ՑՈՒՑԻՉՆԵՐ
Ֆինանսական միջոցները օգտագործել իրենց նպատակային ուղղություններով	Ներքին գնահատման հաշվետվություններ, ֆինանսական հաշվետվություններ
Պլանավորել գնումների կազմակերպման և բյուջեի բաշխման գործընթացը	Բյուջեի նախահաշիվ
Իրականացնել ձեռնարկատիրական գործունեության օրենքով սահմանված փոքր ծրագրեր	Ներքին գնահատման հաշվետվություններ, ֆինանսական հաշվետվություններ
Նվազագույնի հասցնել նախատեսված և փաստացի շեղումների ծավալը	Համեմատական վերլուծություն

4. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ծրագրի ռիսկերը	Գործողությունները
Նորամուծությունների մերժում	Նորամուծությունների աստիճա-նաբար ներմուծում
Մոտիվացիայի ցածր մակարդակ	Խրախուսանք
Ֆինանսներ	Գտնել ֆինանսական աղբյուրներ
Մշակութային կարծրատիպեր	Պահպանելով հինը՝ ներմուծել նորը՝ կոտրելով կարծրատիպերը

5. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆԵՐԸ (ԱՆՀՐԱԺԵՇՏ ՄԱՐԴԿԱՅԻՆ, ՆՅՈՒԹԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ) ԵՎ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

5.1 ԴՊՐՈՑԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԿՐԹՈՒՅԱՆ ՄԿԶԲՈՒՆՔՈՎ

Դպրոցի կառավարումն իրականացվում է ՀՀ օրենսդրությանը համապատասխան:

Դպրոցում կատարվող աշխատանքների կառավարման որակը բարձրացնելու համար պետք է խթանել դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների աշխատանքը. դրա ոչ միայն աջակցողները, այլև մասնակցայի կրթության սկզբունքի համաձային անմիջական մասնակիցը պետք է լինեն դպրոցում կրթական գործընթացի մասնակիցները՝ սովորողը, սովորողի ծնողը, ուսուցիչը և

մանկավարժական այլ աշխատողներ: Անհրաժեշտ է զարգացնել նրանց գործունեությունը և բարձրացնել նրանց դերը ֆորմալ կառավարումից անցնելով իրական ժողովրդավար, համագործակցային թափանցիկ կառավարման:



5.2 ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Դպրոցի գործունեությունը թափանցիկ դարձնելու համար անհրաժեշտ է բարձրացնել կառավարման խորհրդի դերը՝ ներգրավելով նրան աշխատանքների կազմակերպման և վերահսկողական գործընթացում:

Անհրաժեշտ է ստեղծել դպրոցի հոգաբարձուների խորհուրդ, որը ակտիվ մասնակցություն կունենա դպրոցի ֆինանսատնտեսական գործունեության պլանավորման մեջ, կնպաստի ֆինանսական միջոցների առավել նպատակային և արդյունավետ օգտագործմանը:

Շահույթի տնօրինման հիմնական ուղղությունները և համամասնությունները սահմանելիս՝ առաջնությունը կտրվի օժտված և շնորհալի սովորողների բացահայտմանը, նրանց կարողությունների մակարդակով կրթության գործի կազմակերպմանը:

5.3 ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Դպրոցում կրթական գործունեության արդյունավետ կազմակերպման, ինչպես նաև զարգացման ծրագրերին աջակցելու և համայնքի հետ արդյունավետ համագործակցություն ապահովելու համար հոգաբարձուների խորհուրդը մեծ դեր ունի: Անհրաժեշտ է ձևավորել դպրոցի հոգաբարձուների խորհուրդ, խորհրդի կազմում ընդգրկել դպրոցի գործունեությամբ շահագրգիռ անձանց, անհատ ձեռներեցների, տեղական իշխանության ներկայացուցիչների: Հետագա տարիների ընթացքում կաշխատեմ նրանց ներգրավել դպրոցի համար ֆինանսական միջոցների հայթայթմանը, նյութատեխնիկական բազայի ամրապնդմանը, արտաբյուջետային ֆոնդի ձևավորմանը: Համագործակցելով ծնողների, համայնքի ղեկավարի հետ՝ կիրականացնենք սոցիալական ծրագրեր:

Հոգաբարձուների նպատակը պետք է լինի ներդրումներ և նվիրատվություններ ներգրավել անհատ բարերարներից, դպրոցի շրջանավարտներից և կամավոր ֆինանսավորողներից: Գործընթացը պետք է լինի առավել թափանցիկ և մատչելի բարերարի, դպրոցի և տեղական ինքնակառավարման և պետական մարմինների համար:

5.4 ԾՆՈՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել ծնողների կողմից որակյալ կրթության նկատմամբ պահանջարկի ձևավորմանը: Սովորողների կրթության զարգացման գործում զգալի ներդրում ունեն ծնողները: Ծնողների հետ տարվող աշխատանքում արդյունավետ եմ համարում ձեռնարկել հետևյալ միջոցառումները՝

- կազմակերպել հանդիպումներ, որտեղ կներկայացվեն դպրոցի գործունեության վիճակի ու հեռանկարային ծրագրերի, ուսումնադաստիարակչական աշխատանքների մասին,
- ծնողներին մասնակից դարձնել սովորողների ուսուցման, դաստիարակության գործընթացին, ուսումնանյութական բազայի հարստացմանը՝ այդ գործում ներգրավելով հովանավորների,
- ծնողներին մասնակից դարձնել իրենց երեխաների արտադպրոցական և արտադասարանական աշխատանքներին,
- բոլոր ծնողները չեն, որ տիրապետում են երեխայի դաստիարակության և նախնական ուսուցման նրբություններին և հատուկ մանկավարժական մեթոդներին. նրանց օգնելու համար անհրաժեշտ է ձեռնարկել հետևյալ միջոցները.
  - ծանոթացնել երեխայի խնդրին,
  - միասին սահմանել խնդիրը,
  - միասին գտնել խնդիրը լուծելու ուղիները,
  - գնահատել սպասվող արդյունքները,
  - ընտրել և կիրառել խնդրի լուծման առավել խելացի տարբերակը,
  - գնահատել փաստացի արդյունքները:

Այս գործունեությունը կնպաստի դպրոցում ***մասնակցային կրթության*** զարգացմանը, վերահսկողական օղակի ձևավորմանը, կամրապնդվի դպրոց – ծնող կապը, կնպաստի հասարակության մեջ ուսուցչի բարի համբավի վերականգմանը:

5.5 ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Սովորողների ***ինքնավարության և ինքնակառավարման*** նպատակով դպրոցում պետք է ակտիվացնել աշակերտական խորհրդի գործունեությունը: Պետք է նպաստել, որ նրանք մասնակցեն դպրոցի շրջանակներում որոշումների կայացմանը, կարողանան ազատ արտահայտել իրենց կարծիքը, ունենան բարձր իրավագիտակցություն, վերլուծական և քննադատական մտածողություն:

Կայացած աշակերտական խորհուրդը կնպաստի երիտասարդ սերնդի իրավագիտակցության բարձրացմանը, նրա վերլուծական և քննադատական մտածողության, ինչպես նաև պատշաճ վարքի և վարվելակերպի ձևավորմանը, քաղաքացիական հասարակության կայացմանը և զարգացմանը: Քանի որ սովորողը որակյալ կրթության պահանջատերն է, պետք է լսել նրա կարծիքը դասավանդման բովանդակության, սովորողների գիտելիքների յուրացման որակի, նրանց վարքի, կարգապահության բարելավման վերաբերյալ:

5.6 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ելնելով դպրոցի ներքին գնահատման հաշվետվությունից, անհրաժեշտ եմ համարում մանկավարժական խորհրդի գործառույթների իրականացման և զարգացման նպատակներով, դպրոցի ուսուցիչներին մոտիվացնելու , ուսուցման գործընթացներն առավել արդյունավետ դարձնելու համար, իրագործել հետևյալ քայլերը.

- կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ. վերապատրաստումների միջոցով ունենալ ներառական կրթություն իրականացնող ուսուցիչներ,
- ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպել սեմինարներ, մանկավարժական մեթոդական ընթերցումներ,

- ուսումնասիրել, ընդհանարացնել մանկավարժական առաջավոր փորձը և ներդնել պրակտիկ աշխատանքում,
- ընդլայնել տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, հասնել այն բանին, որ յուրաքանչյուր ուսուցիչ տիրապետի համակարգչային ծրագրերին և կարողանա օգտվել համացանցից, այդ նպատակով կազմակերպել դասընթացներ,
- սկսնակ ուսուցիչներին նախապատրաստել ատեստավորման,
- որակավորման տարակարգ չունեցող ուսուցիչների համար ստեղծել պայմաններ որակավորման տարակարգի առաջին աստիճանին հասնելու համար,
- աջակցել մանկավարժներին իրենց մեթոդական աշխատանքների արդյունքների վերաբերյալ նյութերը մշակելու և տպագրելու գործում,
- նպաստել ուսուցիչների որակավորման բարձացմանը:

6. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԵՆՔԱՅԻՆ ՔԱՅԼԵՐԸ

6.1 ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԿ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ

Ելնելով վերոնշյալ դրույթից, ինչպես նաև յուրաքանչյուր երեխայի կարողությունների լիարժեք բացահայտման միջոցով որակյալ կրթական ծառայությունների մատուցման գործընթացների անհրաժեշտությունից՝ պետք է ձեռնարկել հետևյալ միջոցառումները՝

- բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում,
- միջավայրի ֆիզիկական խոչընդոտների վերացում,
- հավասար հնարավորությունների ստեղծում,
- բազմահամակազմ մասնագիտական թիմի ձևավորում,
- կրթական ծրագրերի, ուսումնական նյութերի համապատասխանեցում,
- երեխայի կրթական ծրագրերի մատչելիության ապահովում,
- հաստատության վեբ կայքում ներառական կրթության բաժնի բացում՝ ընտանիքի և համայնքի հետ հետադարձ կապի հնարավորությամբ,
- ներառական կրթության ուղղությամբ ուսուցիչների և վերապատրաստող ուսուցիչների վերապատրաստման ապահովում,
- հաստատությունում ամենուրեք (դասասենյակներ, դահլիճներ, գրադարաններ և այլն) տեղաշարժման տարբեր խնդիրներ ունեցող անձնաց համար ֆիզիկական մատչելիության ապահովվում,
- բավարար քանակի և որակի ուսումնամեթոդական նյութեր և սարքավորումների ձեռքբերում ֆունկցիաների տարատեսակ սահմանափակումներ ունեցող սովորողների համար,
- սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների համար սոցիալական աջակցության ծրագրերի իրականացում:

6.2 ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԿԱԶՄԻ ՈՐԱԿԱԿԱՆ ԲԱՐԵԼԱՎՈՒՄԸ

Կրթօջախի մանկավարժական համակազմի որակական բարելավումը համարում եմ կրթահամալիրի հիմնախնդիրներից մեկը՝ գտնելով, որ այն ենթադրում է ՀՀ կառավարության կողմից 14.10.2010 N 1391- Ն հաստատված որոշման պահանջների կատարում, այսինքն՝

- բոլոր ուսուցիչների ներգրավումը վերապատրաստման դասընթացներին և նրանց ատեստավորումը յուրաքանչյուր տարի մեկ հինգերորդի չափով -կրթօջախի դաստիարակչական համակարգի աշխատանքների կատարելագործում

- Ավելացնել տարակարգ ստացած ուսուցիչների թիվը բոլոր առարկաներից.

6.3 ԿՐԹՕՋԱԽԻ ՍՈՎՈՐՈՂԸ

Օգտագործել աշակերտական խորհրդի՝ որպես սովորողների ինքնավարության և ինքնակառավարման լիազորություններով օժտված ներկայացուցչական մարմնի հնարավորությունները՝ համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորմանը նպաստելու գործում:

– կրթօջախի նորմատիվային համակարգի ամրապնդում, դաստիարակության ոլորտում, սովորողների ուսուցման ու զարգացման ապահովում կրթօջախի կրթական ծրագրերի շրջանակում,

- սովորողների իրավունքների և ազատությունների պահպանում՝ պետական կրթական չափանիշներին համապատասխան,

- սովորողների կրթության բովանդակային կառուցվածքի վերազինում, սովորողների կրթության և ինքնակրթության, նրանց համակողմանի զարգացմանն ուղղված ծրագրի իրականացման միջոցով,

- արտադասարանական խմբակների գործունեության աշխուժացում, դպրոցականների առարկայական օլիմպիադաներին առավել ակտիվ

մասնակցություն, սովորողների կրթության և դաստիարակության հետ առնչվող մեթոդական և դիդակտիկ նյութերի ապահովում,

- սովորողների շահագրգռում՝ հետազոտական աշխատանքներ կատարելու, նրանց համար վարչարարական հետազոտությունների կազմակերպման և իրականացման նպաստավոր պայմանների ստեղծում:

6.4ԴՊՐՈՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒՄԸ

«Ցանկացած հաջողության հիմքի 99 %-ը աշխատանքն է և 1 %-ը՝ տաղանդը, իսկ աշխատանքն անհնար է առանց կարգապահության:
Ա. Ս. Զապեսոցկիյ

Ցանկացած դպրոցական միջավայրում ուսուցման ամենակարևոր ասպեկտներից մեկը կարգապահությունն: Այսօր կարգապահությունը հասկացվում է որպես վարքագծի որոշակի կանոններ, որոնք համապատասխանում են հասարակության մեջ ընդունված նորմերին կամ պահանջներին: Կարգապահությունը միշտ էլ կարևոր դեր է խաղացել մարդու կյանքում:

Դպրոցը աշակերտներին պատրաստում է կյանքին, տալիս է նոր գիտելիքներ և զարգացնում կարգապահությունը, պատասխանա-տվությունն ու բարոյականությունը: Կարգապահությունը ուսուցման հիմքն է: Այդ ուղղությամբ զարգացման սույն ծրագրի շրջանակներում նախատեսել ենք ներդնել մի քանի նոր գաղափարներ, որոնք չեն եղել մեր դպրոցում: Այդ ամենի իրականացումը կհանգեցնի աշակերտների ինտելեկտուալ զարգացմանը, դասամիջոցների իմաստալից անցկացմնը և նախաձեռնողականության ավելացմանը, կմեղմի աշակերտների գերակտիվ վարքագիծը:

1.Ծրագրի այս հատվածը կոչվում է «Խելացի դասամիջոցներ»: Նոր դպրոցական շենքը ունի հնարավորություն առանձին հարկերի լայն ու լուսավոր սրահներից մեկում տեղադրել շախմատի և շաշկիի խաղադաշտեր, որոնք լավագույն զբաղմունքներից մեկն են:

2.Երկրորդ հարկում՝ միջանցքի ճակատային հատվածում, կտեղադրենք նորատիպ SMART/Խելացի հեռուստացույց, որը կօգնի աշակերտներին ոչ միայն դասամիջոցներին, այլև ազատ դասաժամերին անցկացնել հեռուստացույցի մոտ՝ դիտելով իրենց նախընտրած հաղորդումները, ֆիլմերը կամ մուլտֆիլմերը:

3.Ռադիո հանգույցի ստեղծում և գործարկում: Այն կնպաստի տեղեկատվության փոխանցմանը, ինչպես նաև կկազմակերպվեն տարբեր մշակութային ռադիո միջոցառումներ՝ գրական, սպորտային, երգարվեստի, որոնց կազմակերպիչները կլինեն դասարանները ըստ իրենց նախասիրությունների: Պարբերաբար կհնչի բարձրարվեստ երաժշտություն՝ երաժշտական ճաշակի բարձրացման և մշակութային գործիչների և նրանց ստեղծագործությունների ճանաչելիությունն ապահովելու նպատակով:

4.Տարրական դպրոցի աշակերտների համար նախատեսել ենք շարժողական խաղեր մաքուր օդում՝ տարրական դպրոցին կից հարմարավետ բակում՝ իրենց դասվարների կազմակերպմամբ:

5.Որպես նորարություն՝ նորակառույց դպրոցում աշակերտները ներկայանալու են դպրոցական նոր համազգեստով՝ ունենալով տոնական և ամենօրյա տարբերակներ: Տարրական դպրոցն առանձին համազգեստ կկրի, միջինը՝ առանձին:

6.Դպրոցական նոր գույքի պահպանման նպատակով նախա-տեսել ենք սահմանել տուգանքների համակարգ: Գույքը վնասելու դեպքում պատասխանատուն աշակերտներն են իրենց ծնողների հետ: Ծնողը պետք է գումարի տեսքով վճարի պատճառած վնասի արժեքը: Այդ առումով յուրաքանչյուր դասղեկ իր դասարանի ծնողների հետ կկնքի պայմանագրեր՝ ըստ գործող դպրոցի կանոնադրական պահանջի, իսկ պարբերաբար կտարվեն նաև զրույցներ դպրոցական գույքի և շենքի պահպանման մասին:

7.Զարգացման ծրագրում կարևորել եմ նաև նշել բջջային հեռախոսների հավաքումը դասերի ժամերին: Յուրաքանչյուր դասարանում պահարանում դրված 28 դարակներով առկա փայտե արկղերը բավականին լավ տարբերակ են՝ ձերբազատելու աշակերտներին անհարկի շեղումներից: Հեռախոսները բաժանվում

են աշակերտներին դասերի վերջում, անհրաժեշտության դեպքում դրանք տրվում են, եթե դասի ժամին պետք է հեռախոսով էլէկտրոնային թեստեր կատարել:

Կարգապահությունն արվեստ է, որի ամենալավ դպրոցը ընտանիքն է:

8.Սմայլսի այս միտքը կարևորում է ծնողների դերը, ուստի այս ծրագրով զգալի բարձրացնելու ենք ընտանիքի դերը երեխաների դաստիարակության գործում:

Նրանց հետ պետք է կապն ամրապնդել՝ մասնակից դարձնելով դասարանի հետ կապված բոլոր միջոցառումներին և իրադարձություններին: Դաստիրակություն եռանկյունը պետք է անխախտ մնա, նրա 3 կողմերն էլ պետք է մշտարթուն և հետևողական լինեն բոլոր պարագաներում:

9.Զարգացման ծրագրով նախատեսել ենք սկսել նոր հանդիպումների շարք՝ Ճանաչենք մեր մեծերին խորագրով: Կլինեն հանդիպումներ մշակույթի, սպորտի գործիչների հետ: Տարրական դպրոցի գրքերի հեղինակ Սոկրատ Մկրտչյանի հետ արդեն սկսել ենք համագործակցություն, և մեր աշակերտուհիներից մեկը նկարահանվել է ուսումնական հոլովակում՝ Վայոց ձորի ազգային ճաշատեսակի ներկայացում բարբառով: Այն տեղադրվելու է 5-րդ դասարանի մայրենիի նոր դասագրքում՝ QR կոդի ձևաչափով: Դա լինելու է շարունակական և ընդգրկելու է զանազան թեմաներ: Կշարունակվի արդեն սկսված արդյունավետ մշակութային համագործակցությունը երգահան մաեստրո Երվանդ Երզնկյանի հետ: Եղեգնաձորի թ.1 հիմնական դպրոցի համար նա նոտագրեց ուսուցիչների կողմից գրված բանաստեղծության հիման վրա հատուկ երգ, որի պրեմիերան կհնչի նոր դպրոցի բացման օրը: Վերոնշյալ գործողությունները կբարձարացնեն դպրոցի ճանաչելիությունը մարզում և հանրապետությունում:

10.Բարելավել և զարգացնել գրադարանի աշխատանքը: Դասղեկների հետ համատեղ անցկացնել գրական միջոցառումներ, ինչպես նաև հայոց պետական, ազգային տոներին նվիրված միջոցառումներ, ընդգրկել նաև աշխորհրդին, տեղացի ստեղծագործողներին՝ հայոց լեզվի և գրականության ուսուցիչների: սերտ համագործակցությամբ: Դպրոցի մի քանի դասարաններ ամենամսյա գրական-երաժշտական թեմատիկ միջոցառումներ են անցկացնում Վայոց ձորի մարզային

գրադարանի հետ, ծրագրով նախատեսել ենք մեծացնել կապը մարզային գրադարանի հետ, որը կնպաստի ընթերցելու մշակույթի զարգացմանը:

6.5 ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Բնապահպանական դաստիարակության լավագույն ձևը կապն է բնության հետ: Ուստի այդ ուղղությամբ նախատեսում ենք՝

1.Դպրոցամերձ տարածքում այգու հիմնում՝ ծառատունկի միջոցով: Ծառերը լինելու են պտղատու, որպեսզի բերքը տրամադրվի <Դպրոցական սնունդ> ծրագրին: Գործընթացն արդեն սկսված է 8-9-րդ դասարանների աշակերտների մասնակցությամբ: Դպրոցի շրջակայքում կան գազոններ՝ տարբեր մակերեսների, որոնք ծաղկապատվելու են աշակերտների և ծնողների կողմից:

2. Դպրոցի ետնամասում նախատեսել ենք տարրական դպրոցին տրամադրել մի հողակտոր՝ մշակաբույսեր աճեցնելու համար: Այն կխթանի աշակերտների ինչպես բնապահպանական, այնպես էլ աշխատանքային դաստիարակությանը: Նոր չափորոշչային պահանջներին ահմապատասխան նախատեսում ենք բարձրացնել ԲՏՃՄ առարկաների դասավանդման որակը և ակտիվացնել գործնական կապը կյանքի հետ:

Այդ առումով այդ մեթոդական միավորման յուրաքանչյուր առարկայի մասնագետ տարբեր դասարաններում պետք է ներկայացնի ուսումնական նախագծային աշխատանքներ, որոնք միտված կլինեն կյանքի որակի բարելավմանը նպաստող գիտելիքների, գործնական կարողունակությունների և հմտությունների ձևավորմանը 7-9-րդ դասարանների աշակերտների շրջանում:

1. Ապահովել բնապահպանական այլընտրանքային կրթություն՝ համագործակցելով տարբեր բնապահպանական և հասարակական կազմակերպությունների հետ:

6.6 ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՈՂՄՆՈՐՈՇՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԵՎ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

Զարգացման ծրագրով պլանավորել ենք ստեղծել Մասնագիտական կողմնորոշման կենտրոն, որը կկազմակերպի կլոր սեղաններ, հանդիպումներ դասընթացներ տարբեր մասնագիտությունների տեր մարդկանց հետ, ինչպես նաև հաջողակ մարդկանց հետ զրույցներ և այցելություններ տվյալ կազմակերպություններ: Համագործակցելու ենք երիտասարդական տարբեր կենտրոնների, հասարակական կազմակերպությունների, ԲՈՒՀ-ի հետ, փորձի փոխանակաման, տարբեր մասնագիտությունների և դրանց նրբությունների հետ ծանոթության նպատակով: Անմիջական մասնակից դարձնելով նաև ծնողներին, սովորողների կարիքների, կարողությունների, հետաքրքրությունների շրջանակների սահմաններում ուղղորդելու նպատակով:

6.7 ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Ով չի ճանաչում իր հայրենիքը, չի կարող

Ճշմարիտ սիրել նրան:

Ռաֆֆի

Հայրենասիրությունը սկսվում է մեր տնից, բակից, փողոցից, քաղաքից:

Յուրաքանչյուր հայ պետք է իմանա իր տարածքի հինավուրց պատմությունը:

Ուստի դպրոցի զարգացման ծրագրում ներառել ենք նոր գաղափար՝

1.Դպրոցի 3-րդ հարկի սրահում նախատեսել ենք ստեղծել ցուցասրահ, որտեղ կներկայացվի Վայոց ձորի քարտեզը, դարերի պատմությունը, արքայական և իշխանական տոհմերին նվիրված պատմությունները, այլ փաստեր, արքայական

տոհմական զինաշանները և դրոշները: Այդ իշխանական տոհմերը՝ Սյունիները, Օրբելյանները, Պռոշյանները, զգալի դեր են կատարել Վայոց ձորի պատմության կերտման մեջ:

2. Ներկայացնել նաև պատմական ակնարկներ Վարդանանց բլուրի(Քյոշկի) և կիկլոպյան ամրոցների նախապատմության վերաբերյալ::

Ցուցադրության նպատակն էր մեկ անգամ ևս ընդգծել կրթության դերը՝ որպես ազգի ինքնության և ժառանգության կարևոր մաս:

3. Ազգային տոների, եկեղեցական ծեսերի ու ավանդույթների պարբերաբար նշում, Մայրենիի օրվա միջոցառման մասայական անցկացում:

Նպատակը՝ ապահովել մեր դարավոր մշակութային արժեքների փոխանցումը սերնդեսերունդ:

4. Ցուցասրահում ներկայացված կլիեն պատմական փաստաթղթեր, գրքեր Սյունիքի նահանգի 12 գավառներից մեկի՝ Վայոց ձորի մասին:

6.8 ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ, ԴՊՐՈՑԻ ԵՎ ԱՌԱՆՁԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ՀԵՏ

Համագործակցությունը տարբեր ոլորտների և մարմինների հետ նպաստում է սովորողների արժեհամակարգի ձևավորմանը: Համագործակցում ենք մարզի և համայնքի հետևյալ կազմակերպությունների և մարմինների հետ՝

1. Մարզպետարան
2. ՏԻՄ
3. ԱԻՆ
4. Ոստիկանություն
5. Եկեղեցի
6. Թանգարն
7. Պատկերասրահ
8. Պետական քոլեջ
9. ՀՊՏՀ Եղեգնաձորի մասնաճյուղ
10. Զորամասեր
11. Պատկերասրահ

12. Այլ դպրոցներ
13. Քույր դպրոց՝՝ Բարձրունու միջնակարգ դպրոց
14. Հուշարձանների պահպանության մարզային ծառայություն
15. ՏՄԱԿ
16. Կարմիր խաչ
17. Դասավանդի՛ր, Հայաստան հիմնադրամ
18. ԿԶՆԱԿ
19. ՄԱԿ
20. Մարզային գրադարան

Ունեցել և շարունակելու ենք կազմակերպել զրույց-քննարկումներ, հանդիպումներ հայտնի և հաջողված մարդկանց հետ: Մշտապես անցկացվում են մրցույթներ, վիկտորինաներ, հոբելյանական և տոնական օրերին նվիրված միջոցառումներ, սպորտային մրցումներ, ինտելեկտուալ խաղեր, վեբինարներ, տեսադասեր, համատեղ էքսկուրսիաներ, արշավներ և այլ մշակութային միջոցառումներ:

7. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկություններից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները: Ցուցանիշներն ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալներ և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը: Ցուցանիշներն անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար:

«Հանրակրթության մասին» օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը:

Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական:

Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատման մասնակիցներն են վարչական, մանկավարժական աշխատողները, սովորողներն ու ծնողները:

Ուսումնական հրաստատության ներքին և արտաքին գնահատումն ուղղորդվում է սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունն իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն: Ծրագրի իրականացման վերահսկողության ամենարդյունավետ միջոցը հնգամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են:

Ծրագրի իրականացման վերահսկողությունը կիրականացվի համա-կարգման և մոնիտորինգի միջոցով:Դա կիրականացնեն դպրոցի տնօրենությունը և Կառավարման խորհրդը:

Այդ առումով հարկավոր է

- իրականացնել մշտադիտարկում և ծրագրի գործողությունների վերլուծություն՝ հաշվի առնելով մանկավարժական խորհրդի առաջարկությունները:
- դպրոցի խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական, տեղեկատվական և մեթոդական աջակցության շարունակական տրամադրում և աջակցություն ծրագրի իրականացման համար
- համայնքի և դպրոցի այլ շահառուների շարունակական ներգրավումը դպրոցի զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին և այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին
- ուսուցիչների և աշակերտների գործունեության թեմատիկ, ընթացիկ, անհատական և կանխարգելիչ վերահսկողության իրականացում.

- դպրոցի խորհրդի կողմից տարեկան առնվազն 2 անգամ դպրոցի տվյալ ուստարվա համար ժամանակացույցով նախատեսված միջոցառումների իրականացման քննարկումն ու համապատասխան գնահատականների ամրագրումը.

- յուրաքանչյուր տարվա ավարտին ծրագրի վերանայում՝ ըստ ներքին գնահատման արդյունքների.

Դպրոցն ամեն տարի ամփոփում է ծրագրի իրականացումը, ներքին գնահատման միջոցով անփոփում կատարված աշխատանքը, կազմում է հաջորդ տարվա աշխատանքային պլանը, խորհրդակցում մանկավարժական խորհրդի հետ և հաստատում կառավարման խորհրդում:

ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՀՆԱՐԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ

N	Գործողություն	Պատասխանատու	Ժամանակացույց	Հնարավոր ֆինանսական ծախսեր
1	Ուս. հաստատությանկանաչ տարածքների բարեկարգում	Տնօրենություն, համայնք	2023-2027 թթ	Դպրոցի բյուջե, համայնք
2	Դպրոցի շենքը հնարավորինս համաատասխանեցնել ԿԱՊԿՈՒ սովորողների հարմարավետությանը	Տնօրենություն	2023-2027 թթ	Դպրոցի բյուջե, արտաբյուջե տային եկամուտներ , բարերարնե ր
3	Հոգեբանի, լոգոպեդի կաբինետների ստեղծում, դրանց արդյունավետ աշխատանքի ապահովում	Տնօրենություն, կառավարման և խորհրդակցակ ան մարմիններ	2023-2025 թթ	Դպրոցի բյուջե, արտաբյուջե տային աղբյուրներ
4	Աշակերտների համար անհատական պահարանների ձեռքբերում, դպրոցական գույքի նորացում	Տնօրենություն	2024-2027 թթ	Դպրոցի բյուջե, նվիրատվությ ուններ
5	Բարերարների, հովանավորների ներգրավում	Տնօերն	2023-2028 թթ	

	մասին հանդիպումներ, քննարկումներ			
6	Լրացուցիչ կրթական ծրագրերի, ձեռնարկատիրական գործունեության իրականացում	Տնօրեն, մանկավարժներ, հրավիրված մասնագետներ	2023-2028թթ	
7	Կառավարման խորհրդի դերի բարձրացում	Տնօրենություն	2023-2028 թթ	
8	Բժշկական հաստատությունների հետ համագործակցություն՝ անվճար կանխարգելիչբուժզննման նպատակով	Տնօրեն, ՄԿԱԳ տեղակալ, դասղեկներ	2023-2028թթ	
9	Շնորհալի սովորողների բացահայտում, շնորհալիների ակումբի ստեղծում, խրախուսում	Տնօրենություն, ուսուցիչներ, դասղեկներ	2023-2028թթ.	Դպրոցի բյուջե, արտաբյուջետային աղբյուրներ
10	Հոգաբարձուների, շրջանավարտների խորհուրդների ստեղծում	Տնօրեն	2023-2028 թթ.	
11	Դպրոցի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի ամբողջական անցում էլեկտրոնային փաթեթի	Տնօրեն, ուսուցիչներ	2023-2024 թթ	
12	Սոցիալական և բարեգործական ծրագրերի իրականացում	Տնօրենություն, ծնողներ, համայնք, ուսուցիչներ, սովորողներ	2023-20278թթ	
13	Դպրոցի հեռանկարային ծրագրերի, ուսումնադաստիարակ չական աշխատանքների	Տնօրենություն	2023-2028 թթ	

14	Մանկավարժական առաջավոր փորձի ներդնում պրակտիկ աշխատանքում	Տնօրենություն, մ/մ նախագահներ, ուսուցիչներ	2023-2028 թթ	
15	Համակարգչային ծրագրերի հատուկ դասընթացներ ուսուցիչների համար	Տնօրենություն	2023-2024 թթ	Դպրոցի բյուջե, արտաբյուջետայի նաղբյուրներ
16	Մրցունակ շրջանավարտների պատրաստում՝ արդի պահանջներին համապատասխան	Տնօրենություն ,ուսուցիչներ,	2023-2028 թթ	
17	Միջառարկայական համագործակցություն, լրացուցիչ կրթության կազմակերպում	Տնօրենություն, մ/մ նախագահներ, ուսուցիչներ	2023-2028 թթ	
18	Դաստիարակչական աշխատանքներ՝ հիմնված դասղեկականպլանների վրա	Տնօրենություն, ՄԿԱԳ տեղակալ	2023-2028 թթ	
19	Առանձին աշխատանք վարքի խնդիր ունեցող երեխաների հետ	Տնօրենություն, հոգեբան, դասղեկ	2023-2028 թթ	
20	Ներդպրոցական և արտադպրոցական միջոցառումների կազմակերպում	Տնօրենություն, ՄԿԱԳ տեղակալ, դասղեկներ, ուսուցիչներ	2023-2028 թթ	

21	Համագործակցություն իրավապահ մարմինների հետ	Տնօրենություն	2023-2028 թթ	
22	Համագործակցություն մշակութային օջախների հետ	Տնօրենություն ,դասղեկներ	2023-2028 թթ	
23	Ուսումնադաստարակ-չականի գործընթացներին ծնողների մասնակցության ընդլայնում, ծնողական ժողովներ և հանդիպումներ առարակայական ուսուցիչների հետ	Տնօրենություն, ուսուցիչներ, դասղեկ	2023-2028 թթ	

24	Ռազմահայրենասիրական և մշակութային տարբեր միջոցառումների կազմակերպում	Տնօրեն, ուսուցիչներ ՄԿԱԳ տեղակալ, ծնողներ,հյուրեր	2023-2027 թթ	
25	Առողջ ապրելակերպի և սպորտի զարգացում դպրոցում, սպորտային տարբեր միւոցառումների և սպորտլանդիաների կազմակերպում	Տնօրենություն, սպորտի ներկայացուցիչներ, ծնողներ, հյուրեն	2023-2028 թթ	

Այսպիսով՝ որպես «Եղեգնաձորի թիվ մեկ հիմնական դպրոց»-ի տնօրենի պաշտոնի հավակնորդ՝ ամփոփելով ներկայացրածս ծրագիրը, կարծում եմ, որ հնարավոր է հենվել գրանցած հաջողությունների վրա, փորձել շտկել բացթողումներն ու թերությունները և իրականություն դարձնել դպրոցի ծրագրի իմ տեսլականը։